Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ **<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ**

Թեմա՝ **Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասվանդման ընթացքում**

Վերապատրաստող, մենթոր՝ **Արմենուհի Մելքոնյան**

Ուսուցիչ՝ **Տանյա Կարապետյան**

2023

Ներածություն

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի կրթական մեթոդներ: Այն պահից, երբ կբացահայտվեն առավել արդյունավետ մեթոդներ, կրթությունը կդառնա այն բնագավառը, որը կկարողանա բարելավել կյանքը:

Բ. Ն. Սքիներ

Կրթությունը բարդ գործընթաց է, երեխաների ընդունակություններն ու հմտությունները տարբեր: Յուրաքանչյուր ժամանակ ունի իր պահանջները: Ուստի կրթության բարելավման և ուսուցման բարձր որակ ապահովելու համար կիրառում ենք տարբեր մեթոդներ, մոդելներ: Ինչպես նաև կրթությունն ու ուսուցումը ավելի մատչելի, դյուրին և հետաքրքիր դարձնելու համար : Տարբեր մեթոդների կիրառումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, ուսումնառության որակը :

Մեր մեծ բանաստեղծներից մեկը, Եղիշե Չարենցը, ասել է.

- Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր…

Այդպես էլ ուսուցման ոլորտում, ժամանակի պահանջներին համահունչ, տարբեր մեթոդներ կիրառելով ապահովենք ուսուցման բարձր որակ :

Դասավանդման ժամնակկից մեթոդները բազմազան են : Մեր խնդիրն է կարողանալ ճիշտ ժամանակին , ճիշտ տեղում օգտագործել այդ մոթոդները :Կրթությունը ցանկալի գործընթաց է բոլորիս համար: Բոլորս էլ սովորել ենք դպրոցում: Բայց յուրաքանչյուրը կգտնի մի բան, ինչի համար կքննադատի իր դպրոցը կամ կրթությունը, որտեղ սովորել է տարիներ առաջ:
Օր.՝ անհետաքրքիր դասեր, անարդար գնահատականներ, չհասկացված դասանյութեր և այլն: Շատերը կփաստեն, որ եղել են տարիներ, երբ երեխաները փայլել են օլիմպիադաներում, աչքի են ընկել իրենց հաջողություններով: Բայց պետք է նաև փաստել, որ հաջողությունները եղեն են անհատ-ուսուցիչների շնորհիվ: Դա մասշտաբային կրթության արդյունք չի եղել:Դեռ տարիներ առաջ կրթությունը աչքի էր ընկնում կարգապահական կանոններով:Իհարկե,դա շատ դրական ազդեցություն ուներ ուսումնական պրոցեսում, բայց ոչ հիմնական ու կարևոր:Եվ երբ աշակերտը դուրս էր մնում հսկողությունից,կորցնում էր ինքնակարգարգավորվելու ունակությունը:Եվ այստեղ հաճախ կարելի էր լսել.<<Ես չեմ կարող ոչինչ սովորել, քանի որ ուսուցիչը ոչինչ չի հանձնարարել>>..
Ժամանակակից մեթոդները տանում են նրան, որ երեխաները սովորեն սովորել, կարողանան յուրացնել նյութը, եթե անգամ չկա ուսուցչի անմիջական դերակատարությունը և կիրառեն գտելիքները :

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով: ***Մեթոդ-***ը հունարեն բառ է, որ նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսուցման մեթոդների վերջնական և ամբողջական բնութագրում դեռևս չկա: Կարելի է հիշատակել հետևյալ սահմանումները՝

- Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի միասնական աշխատանքն են, որով իրականացվում են կրթական նպատակները:

- Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի համատեղ գործունեությունն են, որոնց արդյունքում սովորողը ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև ձևավորվում են նրա աշխարհայացքը և ճանաչողությունը (Դանիլով Մ. Ա., Եսիպով Բ. Պ):
- Ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի փոխկապակցված գործունեությունն են, որոնք կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների իրականացման նպատակ ունեն (Բաբանսկի Յու. Կ.):
- Ուսուցման մեթոդները ուսուցչի ուսուցանող գործունեության եղանակներն են և սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպումն են որոշակի դիդակտիկական խնդիրներ լուծելու նպատակով, որոնք ապահովում են ուսումնասիրվող նյութի յուրացումը (Խառլամով Ի. Ֆ.):
- Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողների հաջորդական և փոխկապակցված գործողությունների համակարգն են, որոնց շնորհիվ սովորողները յուրացնում են կրթության բովանդակային նյութը, զարգանում են նրանց մտավոր որակները և կարողությունները, ինչպես նաև տիրապետում են ինքնակրթության և ինքնուրույն սովորելու միջոցներին (Կոջասպիրովա Գ. Մ.):

Չնայած դիդակտների տված տարբեր սահմանումներին՝ կա մեկ որոշակի ընդհանուրություն, որ հանդիպում է գրեթե բոլոր հեղինակների մոտ. **ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով**: Եթե խոսքը վերաբերում է միայն ուսուցչի գործունեությանը, ապա տեղին է խոսել դասավանդման մեթոդների մասին, իսկ եթե միայն սովորողի գործունեությանն է վերաբերում, ապա՝ ուսանելու մեթոդների:

Ուսուցման երկկողմ միասնությունն արտահայտելով հանդերձ՝ մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նպատակադրում ունեցող փոխկապակցված գործունեությունը: Ուսուցման մեթոդի էությունը դիտարկվում է որպես դասավանդման եղանակների համակարգ, որն ապահովում է սովորողների ուսումնական-ճանաչողական գործունեության մանկավարժորեն նպատակադրված կազմակերպումը:

Դիդակտիկայում լայնորեն կիրառվում են նաև ,ուսուցման հնար կամ եղանակ և ,ուսուցման կանոն կամ օրենքե հասկացությունները: Ուսուցման հնարը կամ եղանակը այս կամ այն մեթոդի բաղադրիչ մասերից է. մեթոդ ընդհանուր հասկացության բաղադրատարրերից մեկն է: *Մեթոդ* և *հնար* հասկացությունների միջև սահմանը խիստ փոփոխական է: Ուսուցման ամեն մի մեթոդ առանձին հնարների կամ եղանակների հանրագումար է: Որևէ եղանակի գործադրմամբ լիովին չի լուծվում մանկավարժական կամ ուսումնական այս կամ այն խնդիրը, այլ միայն դրա որևէ փուլ կամ մաս կարելի է իրականացնել տվյալ եղանակի կիրառմամբ: Ուսուցման մեթոդները և հնարները մանկավարժական որոշակի իրադրության պայմաններում կարող են փոխատեղվել և փոխարինվել մեկը մյուսով: Մեթոդական նույն հնարները կարող են կիրառվել տարբեր մեթոդների գործադրման ժամանակ: Եվ հակառակը, նույն մեթոդի մեջ տարբեր մանկավարժներ կարող են տարբեր հնարներ կիրառել:

Որոշ իրադրությունների մեջ մեթոդը կարող է հանդես գալ որպես մեթոդական խնդրի լուծման ուղի, իսկ մեկ այլ դեպքում՝ որպես եղանակ, որն ունի մասնավոր նշանակություն: Օրինակ՝ եթե դասավանդողը հաղորդում է նոր նյութը խոսքային մեթոդով (բացատրություն, պատմություն, զրույց), որի ընթացքում կիրառում է դիտողական նյութեր, ապա ցուցադրումը հանդես է գալիս որպես ուսուցման եղանակ: Իսկ եթե հենց այդ ցուցադրվող նյութերն են ուսումնասիրության առարկա, հիմնական գիտելիքները սովորողները ստանում են այդ նյութերի զննության ճանապարհով, ապա խոսքային բացատրություններն արդեն ուսուցման եղանակ կամ հնար են դառնում, իսկ ցուցադրումն այս դեպքում ուսուցման մեթոդն է:

Այսպիսով՝ մեթոդն իր մեջ ներառնում է մի շարք հնարներ, բայց դրանով հանդերձ՝ մեթոդը դրանց սովորական հանրագումարը չէ: Եղանակները բնորոշում են դասավանդողի և ուսանողի աշխատանքի կազմակերպման մեթոդը, նրանց գործունեությանը հաղորդում են անհատական բնույթ:

Ուսուցման կանոնը կամ *օրենքը* նորմատիվ ցուցումն է կամ հրահանգը, թե ինչ արդյունավետ եղանակով պիտի գործել գործունեության իրականացման համար: Այլ խոսքով ասած՝ ուսուցման կամ դիդակտիկական կանոնը կոնկրետ ցուցում կամ հրահանգ է մանկավարժական որոշակի իրադրության մեջ գործելու մասին:

Օրենքը կամ *կանոնը մեթոդի* կամ *հնարի* կիրառման նկարագրությունն է, իսկ որոշակի խնդրի լուծման համար նախատեսված եղանակների և ձևերի համակարգն արդեն տվյալ մեթոդի նորմատիվ-նկարագրական մոդելն է:

Ինչպես գիտենք, գոյություն ունեն ուսուցման և ուսումնառության բազմաթիվ մեթոդներ, և ուսուցիչն ազատ է այդ մեթոդների ընտրության հարցում: Սակայն, մեթոդի ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել: Որպեսզի ուսուցման և ուսումնառության գործընթացը արդյունավետ լինի, արդյունքում իրականացվեն ուսուցման նպատակներն ու լուծվեն առաջադրված խնդիրները, ուսուցման և ուսումնառության մեթոդներն ընտրելիս՝ հարկավոր է հաշվի առնել մի շարք գործոններ.

- ուսուցման նպատակները և նրանցից բխող խնդիրները,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալն ու բարդության աստիճանը,
- սովորողների պատրաստակամությունն ու պատրաստականության մակարդակը,
- ուսումնական ժամաքանակը,
- սովորողների տարիքն ու աշխատունակությունը,
- թվաքանակը և ուրիշ շատ այլ գործոններ
- Դասի փուլը

Ուսուցման մեթոդների դասակարգումը

Ժամանակակից մանկավարժական պրակտիկայում մեծ թվով մեթոդներ են կիրառվում: Դրանց ընտրության ընթացքում դասավանդողը բազմաթիվ դժվարությունների է հանդիպում: Այդ պատճառով էլ մեթոդները դասակարգելու անհրաժեշտություն է առաջանում, որը կօգնի բացահայտելու դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները, էական և պատահական կողմերը, դրանով էլ հնարավոր է դառնում դրանց նպատակադրված և արդյունավետ կիրառությունը:

Մեթոդների միասնական դասակարգում գոյություն չունի: Դիտարկենք առավել տարածում գտած մի քանի դասակարգումներ:

Ըստ սովորողների ակտիվության աստիճանի դասակարգում (Գոլանդ Ե. Յա.)

Այս դասակարգման համաձայն՝ ուսուցման մեթոդները բաժանվում են ակտիվ և պասսիվ տեսակների՝ պայմանավորված սովորողների՝ ուսումնական գործընթացին մասնակցելու աստիճանով: Պասսիվ են այն մեթոդները, որոնց կիրառման ընթացքում սովորողները միայն նայում կամ լսում են (պատմություն, բացատրություն, դասախոսություն, էքսկուրսիա, ցուցադրում, զննում), ակտիվ են սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպող և խթանող մեթոդները (լաբորատոր, պրակտիկ մեթոդները, գրքով աշխատանքը):

Մեթոդ բառը հունարեն ծագում ունի և թարգմանաբար նշանակում է ճանապարհ, ինչ-որ բանի տանող ուղի: Խնդիր չունենալով քննարկել և գնահատել այդ սահմանումները, այնուհանդերձ հարկ է փաստել, որ ուսուցման և ուսումնառութան մեթոդները կոնկրետ գործիքներ են, որոնց օգնությամբ իրականացվում են ուսուցման նպատակներն ու ուսումնառության արդյունքները:

Վերջին ժամանակներս, կապված կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հետ, ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում ուսուցման ակտիվ մեթոդներ հասկացությունը:
Դրանք այն մեթոդներն են, որոնք ապահովում են ուսուցման և ուսումնառության ակտիվ, զարգացնող միջավայր: Ակտիվ մեթոդները ստեղծում են՝
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ սովորողները գիտելիքն ստանում են՝ հենվելով սովորողների իրական հնարավորությունների ու բնական հետաքրքրությունների վրա :
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, երբ գիտելիքը կապվում է սովորողների կենսափորձի հետ
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որը ենթադրում է խմբային աշխատանք ու հետազոտություն, գիտելիքի ձեռք բերում համագործակցության միջոցով:
ստեղծում են հանդուրժողականության միջավայր, զարգացնելով սովորողների սոցիալական փոխազդեցության, շփման ու հաղորդակցման հմտությունները.
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որը հնարավորություն է տալիս սովորողներին նյութի յուրացման ընթացքում ակտիվացնել, կենտրոնացնել, ընտրել, կազմակերպել, միավորել ու կիրառել սովորածը:
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, երբ սովորողները տարբեր ոլորտների գիտական ձեռք բերումները օգտագործում են կենսական խնդիրներ լուծելու միջոցներ:
ամեն անգամ գիտելիքը ինքնուրույն կառուցելու և նորը հայտնագործելու միջավայր.
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ ապավինում են ոչ այնքան սովորողների հիշողությանը, որքան՝ ինքնուրույն, քննադատական և ստեղծագործական մտածողությանը:
ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ էլ ավելի բարդանում ու բազմազան են դառնում ուսուցչի խնդիրները: Դասարաններում, որտեղ ուսումնական գործընթացի գլխավոր դերակատարը սովորողն է, ուսուցիչը դադարում է լինել գիտելիքի միակ աղբյուրը:Ավելին, նա իր անձնական վարքով ցուցադրում է հետազոտող, փնտրող մտքի օրինակ, սովորողներին օգնում է ձեռք բերել, իսկ ապա և գործադրել սովորելու և իմաստավորելու ռազմավարական միջոցները:
ստեղծում են այնպիսի միջավայր, որը հրահրում է ինքնակրթությունը, ապահովում է սովորելու հմտություն, ուսուցում ողջ կյանքի համար:

Ըստ գիտելիքի ձեռքբերման աղբյուրի (Վերզիլին Ն. Մ., Պերովսկի Ե. Ի., Լորդկիպանիձե Դ. Օ.): Գիտելիքի ձեռքբերման երեք աղբյուր գոյություն ունի՝ խոսք, զննականություն, պրակտիկա կամ գործնական աշխատանք: Սա ամենից տարածված դասակարգումն է:

Համապատասխանաբար առանձնացնում են **խոսքային մեթոդները** (գիտելիքի աղբյուրը բանավոր կամ տպագիր խոսքն է), **ակնառու-իրազննական մեթոդներ** (գիտելիքի աղբյուր են առարկայի, երևույթի, դիդակտիկ նյութի զննությունը), **պրակտիկ մեթոդներ** (գիտելիքները և կարողությունները ձևավորվում են պրակտիկ գործունեության ընթացքում):

Խոսքային մեթոդներն ուսուցման մեջ կենտրոնական դիրք են գրավում: Սրանց շարքում պիտի դասել պատմությունը, բացատրությունը, զրույցը, բանավեճը, դասախոսությունը, գրքով աշխատանքը:

Զննական մեթոդների դեպքում մեծ կիրառություն ունեն զանազան գծապատկերները, աղյուսակները, նկարները, մոդելները, սարքերը, տեխնիկական միջոցները: Ակնառու-իրազննական մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ցուցադրում և նկարազարդում (իլյուստրացիա):

Ուսուցման պրակտիկ մեթոդները հիմնված են սովորողի գործնական աշխատանքի վրա: Սրանց գլխավոր նշանակությունը սովորողների գործնական աշխատանք կատարելու կարողությունների և հմտությունների ձևավորումն է:

Ըստ դիդակտիկ նպատակադրման (Դանիլով Մ. Ա., Եսիպով Բ. Պ.)՝ դասակարգման մեջ առանձնացնում եմ հետևյալ խումբ մեթոդները՝

- նոր գիտելիքի ձեռքբերման մեթոդներ,
- կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ,
- գիտելիքի կիրառման մեթոդներ,
- գիտելիքը, կարողությունը, հմտությունն ամրապնդող և ստուգող մեթոդներ:

Այս դասակարգման մեջ առաջնային են ուսուցման նպատակները, որի շնորհիվ էլ հաղթահարվում են տարբեր մեթոդական խմբերի միջև գոյություն ունեցող անջրպետը. դասավանդողի գործունեությունն ուղղվում է դեպի դիդակտիկական խնդիրների լուծումը:

Մեթոդների դասակարգումն ըստ սովորողների ***ճանաչողական գործունեության*** կազմակերպման (Լերներ Ի. Յա., Սկատկին Մ.Ն.): Ճանաչողական գործունեության բնույթը սովորողի մտածական ակտիվության աստիճանն է: Առանձնացնում են հետևյալ մեթոդները՝

- բացատրական-նկարագրական (իլյուստրատիվ)
- վերարտադրողական
- պրոբլեմային շարադրանք
- մասամբ որոնողական (էվրիստիկ)
- հետազոտական

Բացատրական-նկարագրական (իլյուստրատիվ) մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը տարբեր միջոցներով հաղորդում է պատրաստի տեղեկատվությունը, իսկ սովորողներն ընկալում, գիտակցում և մտապահում են: Տեղեկատվությունը դասավանդողը հաղորդում է բանավոր խոսքով (պատմություն, զրույց, բացատրություն, դասախոսություն), տպագիր խոսքով (դասագիրք, լրացուցիչ նյութեր), ակնառու-զննական նյութեր (աղյուսակներ, գծապատկերներ, նկարներ, կինո և տեսաֆիլմեր), որոշակի գործունեության պրակտիկ ցուցադրում (փորձի ցուցադրում, աշխատանք հաստոցի վրա, խնդրի լուծման եղանակներ և այլն):

Սովորողների ճանաչողական գործունեությունը հանգեցնում է պատրաստի գիտելիքի մտապահման, որը կարող է լինել նաև ոչ գիտակցված: Այս դեպքում սովորողների մտածական ակտիվությունը բավական ցածր է:

Վերարտադրողական մեթոդը ենթադրում է, որ դասավանդողը հաղորդում է պատրաստի գիտելիք, իսկ սովորողը յուրացնում, վերարտադրում և կարողանում է կրկնել գործունեության եղանակը դասավանդողի հանձնարարությամբ: Յուրացման չափանիշը գիտելիքի ճիշտ վերարտադրությունն է: Այս երկու մեթոդների հիմնական հատկանիշը ժամանակի տնտեսումն է: Ծավալուն նյութն առանց մեծ ջանքերի կարելի է կարճ ժամանակում հաղորդել և ստուգել դրա յուրացումը: Գիտելիքը կարող է բավական կայուն լինել, քանի որ բազմակի կրկնության ճանապարհով է յուրացվում: Սրանք երկուսն էլ երաշխավորում են գիտելիքի և կարողությունների հարստություն, ձևավորում են որոշակի մտածական օպերացիաներ, սակայն սովորողների ստեղծագործական կարողությունները չեն զարգացնում: Այս վերջին նպատակի համար կիրառվում են այլ մեթոդներ, հատկապես պրոբլեմային շարադրանքի մեթոդը:

Պրոբլեմային շարադրանքը անցում է կատարում կատարողականից դեպի ստեղծագործական գործունեություն: Մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը ներկայացնում է պրոբլեմը և ինքն էլ այն լուծում է՝ ցույց տալով դատողական մտքի ընթացքը ճանաչողության գործընթացում: Սովորողներն այդ ընթացքում հետևում են շարադրանքի տրամաբանությանը՝ յուրացնելով պրոբլեմի լուծման փուլերը: Այդ ընթացքում նրանք ոչ միայն ընկալում են, գիտակցում և մտապահում են պատրաստի գիտելիքները, եզրակացությունները, այլ նաև հետևում են ապացույցների տրամաբանությանը, դասավանդողի մտքի ընթացքին. ընդ որում՝ դասավանդողին կարող է փոխարինել տեխնիկական որևէ միջոց՝ կինո, հեռուստատեսություն, գրքեր և այլն: Չնայած այս մեթոդի կիրառության դեպքում սովորողներն ակտիվ մասնակից չեն, այլ միայն հետևում են մտքի ընթացքին, նրանք սովորում են լուծել ճանաչողական հիմնախնդիրներ:

Ճանաչողական գործունեության առավել բարձր աստիճան է մասամբ ***որոնողական*** կամ ***Էվրիստիկ*** մեթոդը: Այս դեպքում սովորողներն ինքուրույն են լուծում ուսումնական բարդ խնդիրը ոչ թե սկզբից մինչև վերջ, այլ միայն մասամբ: Դասավանդողը սովորողներին ընդգրկում է պրոբլեմի լուծման որոնման գործընթացի մեջ: Գիտելիքների մի մասը հաղորդում է դասավանդողը, որոշ մասը լրացնում են սովորողները՝ պատասխանելով տրված հարցերին կամ էլ լուծելով հիմնախնդիրը: Ուսումնական գործընթացը զարգանում է հետևյալ գծակարգով՝ դասավանդող-սովորող-դասավանդող-սովորող և այլն:

Այսպիսով ուսուցման մասամբ որոնողական մեթոդը հանգեցնում է նրան, որ

- ողջ գիտելիքը չէ, որ սովորողին ներկայացվում է պատրաստի վիճակում, որոշ բանի պիտի հասնել ինքնուրույն,
- դասավանդողի գործունեության մեջ մտնում է պրոբլեմային իրավիճակի լուծման ընթացքի օպերատիվ կառավարումը:

Այս մեթոդի ձևափոխություններից մեկն էլ ***Էվրիստիկ զրույցն*** է:

Ուսուցման ***հետազոտական մեթոդը*** նախատեսում է սովորողների՝ գիտելիքների ստեղծագործաբար յուրացումը: Դրա էությունը հետևյալն է՝

- դասավանդողը սովորողների հետ ձևակերպում է հիմնախնդիրը (պրոբլեմը),
- սովորողներն ինքնուրույն լուծում են այն,
- դասավանդողն օգնում է միայն այն դեպքում, երբ պրոբլեմի լուծման ճանապարհին դժվարություններ են ի հայտ գալիս:

Այսպիսով՝ հետազոտական մեթոդը ոչ միայն գիտելիքների ամփոփման, այլև գիտելիքը ինքնուրույն ձեռք բերելու, առարկան կամ երևույթը ուսումնասիրելու, եզրահանգումներ կատարելու և գիտելիքները և կարողությունները կյանքում կիրառելու նպատակներով է գործադրվում: Մեթոդի էությունը նոր խնդրի լուծման նպատակով սովորողների որոնողական-հետազոտոկան գործունեության կազմակերպումն է:

Այս մեթոդի թերությունն այն է, որ պահանջում է բավական ժամանակ, դասավանդողի մանկավարժական վարպետություն և բարձր որակ:

Ըստ ուսուցման գործընթացի ամբողջական մոտեցման (Բաբանսկի Յու. Կ.)՝ ուսուցման մեթոդները բաժանվում են երեք խմբի.

1) ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդներ,

2) ուսումնաճանաչողական գործունեության խթանումն ապահովող մեթոդներ.

3) ուսումնաճանաչողական գործունեության արդյունավետության գնահատման և ինքնագնահատման մեթոդներ:

Առաջին խումբը ներառում է հետևյալ մեթոդները՝

- պերցեպտիվ մեթոդներ (զգայարանների միջոցով ուսումնական տեղեկատվության փոխանցում և ընկալում),
- խոսքային մեթոդներ (դասախոսություն, պատմություն, զրույց և այլն),
- զննական մեթոդներ (ցուցադրում, նկարազարդում-լուսաբանում-իլյուստրացիա),
- պրակտիկ մեթոդներ (փորձեր, վարժություններ, առաջադրանքների կատարում),
- տրամաբանական, այսինքն՝ տրամաբանական գործառնությունների կազմակերպում և իրականացում (ինդուկտիվ, դեդուկտիվ, համանմանության կամ անալոգային և այլն),
- իմացաբանական (հետազոտական, պրոբլեմային-որոնողական, վերարտադրողական).
- ուսումնական գործողությունների ինքնակառավարում (ինքնուրույն աշխատանք գրքով, սարքերով և այլն):

Մեթոդների երկրորդ խմբի մեջ մտնում են՝

- ուսումնառության նկատմամբ հետաքրքրություն առաջացնող մեթոդներ (ճանաչողական խաղեր, ուսումնական բանավեճեր, պրոբլեմային իրադրությունների ստեղծում և այլն),
- ուսումնառության գործընթացում պարտքի և պատասխանատվության զգացումներ ձևավորող մեթոդներ (խրախուսանք, քաջալերում, նկատողություն և այլն):

Մեթոդների երրորդ խմբի մեջ մտնում են գիտելիքների, կարողությունների, հմտությունների տարբեր բնույթի ստուգման բանավոր, գրավոր, մեքենայական

եղանակները, ինչպես նաև սեփական ուսումնաճանաչողական գործունեության արդյունավետության ինքնաստուգման մեթոդները:

Ուսուցման մեթոդների դասակարգում՝ **ըստ զույգային համագործակցության,** որի հիմքում ընկած է դասավանդողի և ուսանողի համատեղ գործունեության կազմակերպումը (Մախմուտով Մ. Ի.):

Ուսուցման մեթոդների բինարային կամ պոլինարային (բազմակի) դասակարգման հիմքում ընկած են երկու կամ առավել ընդհանրական հատկանիշներ: Մախմուտովի կողմից մշակված ուսուցման այս մեթոդները բաժանվում են երկու խմբի՝

1) դասավանդման մեթոդներ (տեղեկատվական-հաղորդագրական, բացատրական, կառուցողական-գործնական, բացատրական-խթանողական, խթանման),

2) սովորելու մեթոդներ (կատարողական, վերարտադրողական, արդյունավետ-կիրառական, մասամբ որոնողական, որոնողական):

Ուսուցման մեթոդների դասակարգում **չորս սկզբունքների հիման վրա՝** ***տրամաբանական-բովանդակային, սկզբնաղբյուրային, գործընթացային, կազմակերպական-ղեկավարման***, առաջարկում է Ս. Գ. Շապովալենկոն:

Ինչպես նկատում ենք, առայժմ դեռ չկա միասնական մոտեցում ուսուցման մեթոդների դասակարգման հարցում, և դիտարկած ցանկացած դասակարգում ունի թե՛ առավելություններ, թե՛ թերություններ: Ուսուցման որևէ մեթոդի ընտրության և կիրառման ժամանակ սրանք պիտի նկատի ունենալ: Այս բազմակողմանի և ոչ միանշանակ մոտեցումները վկայում են ուսուցման մեթոդների բազմակողմանիության մասին:

* * *

Այժմ դիտարկենք տարբեր դասակարգումների մեջ առավել շրջանառվող մի քանի մեթոդներ:

Պատմություն: Սա նյութի մենախոսական հաջորդական շարադրումն է նկարագրական կամ պատմողական ձևով: Պատմությունը կիրառվում է փաստական տեղեկությունների հաղորդման համար, որը պահանջում է շարադրանքի պատկերավորություն և հաջորդականություն: Այս մեթոդը գործադրվում է ուսուցման բոլոր փուլերում, փոփոխվում են միայն դրա խնդիրները, պատմության ծավալը և ոճը: Այս մեթոդը շատ արդյունավետ է կրտսեր տարիքի դպրոցականների հետ աշխատելիս, քանի որ տարիքային այդ խմբին հատուկ է պատկերավոր մտածողության բուռն զարգացումը: Պատմության զարգացնող առանձնահատկությունն այն է, որ ակտիվացնում է հոգեկան գործընթացները՝ երևակայությունը, մտածողությունը, հիշողությունը, հուզական ապրումները: Ազդելով մարդու զգացմունքների վրա՝ պատմությունն օգնում է հասկանալու և յուրացնելու դրա մեջ արտահայտված վարքի կանոնների և բարոյական գնահատականների իմաստը:

Ըստ նպատակի առանձնացնում են՝

- պատմություն-մուտք. սա սովորողներին պատրաստում է նոր նյութի հաղորդման համար,
- ընդարձակ պատմություն. կիրառվում է համապատասխան բովանդակության շարադրման համար,
- պատմություն-եզրափակում կամ ամփոփում. ուսուցված նյութի ամփոփման ժամանակ է կիրառվում. ամփոփում է սովորած նյութը:

Պատմությանը՝ որպես ուսուցման մեթոդի ներկայացվում են որոշակի պահանջներ. պատմությունը պետք է ապահովի դիդակտիկական նպատակների իրականացումը, պարունակի իրական և հավաստի փաստեր, ունենա հստակ տրամաբանություն, շարադրանքը պիտի լինի ապացուցողական, պատկերավոր, հուզական և նկատի ունենա սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Անխառն ձևով պատմությունը հազվադեպ է կիրառվում: Սա հաճախ կիրառվում է ուսուցման այլ մեթոդների համադրությամբ՝ ցուցադրությամբ, քննարկումներով, զրույցով:

Եթե պատմության միջոցով չի հաջողվում ապահովել նյութի պարզ և հստակ ըմբռնումը, ապա կիրառվում է բացատրության մեթոդը:

Բացատրություն: Սա ուսումնասիրվող առարկայի, երևույթի, առանձին հասկացությունների օրինաչափությունների և առանձնահատկությունների

բացատրությունն է: Բացատրությանը բնորոշ է շարադրանքի ապացուցողական բնույթը, որը հիմնված է տրամաբանորեն իրար հետ կապված մտահանգումների վրա, որոնք բացահայտում են տվյալ երևույթի իրական կողմերը: Բացատրությանը հաճախ դիմում են տարբեր գիտություններից տեսական նյութ ուսուցանելու ժամանակ: Որպես ուսուցման մեթոդ բացատրությունը կիրառվում է տարբեր տարիքի մարդկանց հետ աշխատելիս:

Բացատրական մեթոդին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ հիմնահարցի կամ պրոբլեմի էության ճշգրիտ և հստակ ձևակերպում, պատճառահետևանքային կապերի հաջորդական բացահայտում և ապացուցում, համեմատության, համանմանության, բաղդատության կիրառում և շարադրանքի անվիճելի տրամաբանվածություն:

Շատ դեպքերում բացատրությունը համատեղվում է դիտումներին, սովորողների և դասավանդողի կողմից ձևակերպված հարցադրումներին և կարող է վերածվել զրույցի:

Զրույցը երկխոսության բնույթ ունեցող ուսուցման մեթոդ է, որի ընթացքում մանկավարժը որոշակի հարցադրումների միջոցով սովորողներին հասցնում է նոր նյութի ընկալմանը կամ էլ ստուգում է արդեն ուսուցանված թեմայի յուրացումը: Զրույցը՝ որպես ուսուցման մեթոդ, կարող է կիրառվել ցանկացած դիդակտիկական խնդիր լուծելու համար: Տարբերում են անհատական զրույցներ (հարցերը հասցեագրվում են մեկ աշակերտի), խմբային զրույցներ (հարցերը հասցեագրվում են որևէ խմբի) և ֆրոնտալ (հարցերը հասցեագրվում են բոլորին):

Ըստ ուսուցման խնդիրների և նպատակների՝ զրույցների տարբեր տեսակներ են կիրառվում՝

- *Ներածական կամ մուտքի զրույցները* կիրառվում են որևէ նյութի ուսուցումը սկսելուց առաջ: Այսպիսի զրույցով ակտիվացնում են նախկինում ձեռք բերած գիտելիքները, ինչպես նաև ստուգվում է նոր նյութի հաղորդման համար սովորողների պատրաստվածության աստիճանը, առաջիկա ուսումնաճանաչողական գործունեության մեջ ընդգրկվելու մակարդակը:
- *Նոր նյութի հաղորդման զրույցներ*, որոնք կարող են լինել կատեխիզիկական (պատասխաններ այնպիսի ձևակերպումով, որոնք համապատասխանում են ուսուցչի տված կամ դասագրքում զետեղված հարցերին), սոկրատյան (դատողությունների տրամադրող) և էվրիստիկ (սովորողներն ակտիվորեն ընդգրկվում են նոր գիտելիքի որոնման, եզրակացությունների ձևակերպման գործընթացում):
- *Սինթեզող կամ ամրապնդող զրույցներ*, որոնք ծառայում են ընդհանրացնելու և համակարգելու սովորողների գիտելիքները և դրանք տարբեր իրավիճակներում կիրառելու կարողությունները:
- *Ստուգողական-շտկողական զրույցներ*, որոնք կիրառվում են ախտորոշման, ինչպես նաև սովորողների գիտելիքների ճշգրտման և լրացման նպատակներով:

Զրույցների տեսակներից մեկն էլ *հարցազրույցն* է, որը կարող է անցկացվել մեկ մարդու կամ խմբի կողմից:

Զրույց անցկացնելիս շատ կարևոր են հարցադրումների ճիշտ ձևակերպումները: Դրանք պիտի լինեն կարճ, հստակ, բովանդակալից, տրամաբանորեն կապված պետք է լինեն միմյանց հետ, բացահայտեն ուսուցանվող նյութի ամբողջականությունը և էությունը, օժանդակեն համակարգված գիտելիքի յուրացումը: Հարցերն իրենց բովանդակությամբ և ձևով պետք է համապատասխանեն սովորողների զարգացման աստիճանին, քանի որ չափազանց հեշտ կամ բարդ հարցերը ակտիվ ուսումնաճանաչողական գործունեության կամ իմացության նկատմամբ լուրջ վերաբերմունքի դրսևորմանը չեն նպաստում: Հարկ չկա ձևակերպելու երկակի կամ հուշող՝ պատրաստի պատասխան պարունակող, կամ էլ միանշանակ ,այո կամ ,ոչ պատասխան ակնկալող հարցեր:

Զրույցն ունի շատ արժանիքներ. ակտիվացնում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը, զարգացնում է նրանց խոսքը, հիշողությունը, մտածողությունը, դաստիարակիչ ուժ ունի, ծառայում է որպես ախտորոշիչ միջոց, օգնում է կառավարելու սովորողների գիտելիքները:

Սակայն այս մեթոդն ունի նաև թերություններ. պահանջում է երկարատև ժամանակահատված, եթե սովորողները չունեն որոշակի պատկերացումների և հասկացությունների պաշար, ապա զրույցը արդյունավետ լինել չի կարող: Բացի դրանից՝ զրույցը չի տալիս գործնական համապատասխան գիտելիքներ և կարողություններ, պարունակում է սխալը ամրապնդելու բացասական կողմ. որևէ սովորողի սխալ պարտասխանը կարող է մյուսների հիշողության մեջ ամրակայվել որպես ճշմարիտ գիտելիք:

Դասախոսությունը ծավալուն նյութի մենախոսական բնույթի հաղորդումն է: Խոսքային այլ մեթոդներից տարբերվում է նրանով, որ ունի կայուն կառուցվածք՝ հաղորդվող նյութի ծավալայնություն, նյութի մատուցման տրամաբանություն, գիտելիքների համակարգված բնույթ:

Տարբերում են գիտական-հասարակական և ակադեմիական դասախոսություններ: Գիտական-հասարակական դասախոսությունները կիրառվում են գիտելիքները հանրայնացնելու, հասարակության լայն շերտերին տեղեկացնելու համար: Ակադեմիական դասախոսությունները կիրառվում են հանրակրթական դպրոցի ավագ դասարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դասախոսությունները նվիրվում են ուսումնական ծրագրի առավել խոշոր և կարևոր բաժիններին: Դրանք միմյանցից տարբերվում են իրենց կառուցվածքով, նյութի շարադրման ձևերով: Դասախոսությունը կարող է կիրառվել անցած նյութն ամփոփելու և ընդհանրացնելու համար:

Դասախոսության տրամաբանական կենտրոնը գիտության որևէ ճյուղի տեսական ընդհանրացումն է: Պատմության կամ զրույցի հիմնական մաս կազմող որոշակի փաստերն այստեղ սոսկ ծառայում են որպես ցուցադրական կամ ելակետային, մեկնարկային պահեր:

Այսօր դասախոսության կիրառությունն արդիական բնույթ ունի, քանի որ առավել տարածված է դառնում նոր նյութի խոշոր բաժիններով և բլոկներով ուսուցումը:

Ուսումնական բանավեճը՝ որպես ուսուցման մեթոդ, հենվում է որոշակի հիմնահարցի շուրջ կարծիքների և տեսակետների փոխանակման վրա: Ընդ որում այդ հայացքներն արտացոլում են կա՛մ բանավեճին մասնակից անձի տեսակետները, կա՛մ էլ հիմնվում են այլ անձանց հայտնած կարծիքների վրա: Ուսումնական բանավեճի գլխավոր գործառույթը ճանաչողական հետաքրքրության խթանումն է: Բանավեճի շնորհիվ մասնակիցները ձեռք են բերում նոր գիտելիքներ, ամրապնդվում է սեփական կարծիքի ճշմարտացիության զգացումը, սովորում են պաշտպանել սեփական տեսակետը, հաշվի նստել այլոց հետ, հանդուրժել և ընդունել նրանց արտահայտած տեսակետները և կարծիքները:

Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել, եթե մասնակիցները բանավեճի թեմայի շուրջ համապատասխան գիտելիքներ ունեն, հասուն են և ունեն ինքնուրույն մտածողություն դրսևորելու կարողություն, կարողանում են փաստերով ապացուցել և հիմնավորել սեփական տեսակետը: Այդ իսկ պատճառով սովորողներին հարկ է նախօրոք թե՛ բովանդակային, թե՛ ձևի առումով նախապատրաստել բանավեճին: Բովանդակային նախապատրաստությունը պայմանավորված է բանավեճի թեմային համապատասխան անհրաժեշտ գիտելիքների կուտակումով, իսկ ձևական կողմը այդ գիտելիքի հաղորդման ձևի ընտրությունն է: Առանց գիտելիքի բանավեճը կդառնա անիմաստ և անբովանդակ, իսկ մտքերը շարադրելու, ընդդիմախոսներին համաոզելու անկարողությունը բանավեճը դարձնում են անհրապույր և հակասական:

Աշխատանք դասագրքով և գրքով. սա ուսուցման կարևոր մեթոդներից մեկն է: Այս մեթոդի գլխավոր առավելությունն այն է, որ սովորողը ցանկացած ժամանակ իրեն հատուկ տեմպով նորից ու նորից կարող է կարդալ ուսումնական նյութը: Ծրագրավորված դասագրքեր կիրառելու դեպքում, որոնցում, բացի ուսումնական նյութից, տեղ են գտնում կառավարող տեղեկություններ, արդյունավետորեն կլուծվեն գիտելիքների և կարողությունների ստուգման, շտկման և ախտորոշման հարցերը: Գրքով աշխատանքը կարող է կազմակերպվել ինչպես ուսուցչի անմիջական ղեկավարությամբ, այնպես էլ որպես սովորողի ինքնուրույն աշխատանք տեքստի շուրջ: Այս մեթոդի շնորհիվ կարելի է

իրականացնել երկու խնդիր. սովորողները յուրացնում են ուսումնական նյութը և կուտակում են տեքստային աշխատանքի փորձ, սովորում են աշխատել տարբեր բնույթի տպագիր աղբյուրներով:

Նկարագրենք տեքստային աշխատանքի մի քանի ձևեր:

- *Կոնսպեկտավորում* - կարճ գրառում, կարդացածի բովանդակության հակիրճ կամ համառոտ շարադրանք: Տարբերում են ամբողջական, ընտրովի, լրիվ կամ հակիրճ կոնսպեկտավորում: Կարելի է կոնսպեկտավորել կա՛մ 1-ին (իր կողմից), կա՛մ 3-րդ դեմքի անունից: Նախընտրելի են 1-ին դեմքով կատարվող կոնսպեկտավորումները, քանի որ այս դեպքում լավ զարգանում է ինքնուրույն մտածողությունը:
- *Թեզիսներ* - հիմնական մտքերի հակիրճ շարադրանք որոշակի հաջորդականությամբ:
- *Ձեկուցում* - տվյալ թեմայի շուրջ մի քանի սկզբնաղբյուրների ամփոփագիր՝ հավելելով դրանց բովանդակության և և ձևի վերաբերյալ սեփական դիտարկումները:
- *Պլանի կազմում* - տեքստը կարդալուց հետո անհրաժեշտ է այն բաժանել մասերի, յուրաքանչյուր մասի համար ընտրել վերնագիր: Պլանը կարող է լինել պարզ և բարդ:
- *Մեջբերում* - տեքստից բառացի հատվածների ընտրություն: Մեջբերման ժամանակ պիտի պահպանել որոշակի պայմաններ՝ 1) մեջբերման դեպքում իմաստն աղավաղել չի կարելի, 2) անհրաժեշտ է նշել տեքստի հեղինակի ազգանուն-անունը, ստեղծագործության վերնագիրը, հրատարակության վայրը, հրատարակչության անունը, տարին և էջը, որից վերցված է մեջբերումը:
- *Ծանոթագրություն* (անոտացիա) - կարդացածի բովանդակության հակիրճ և սեղմ շարադրանք՝ առանց հիմնական իմաստի կորստի:
- *Գրախոսություն* (ռեցենզիա) - կարդացածի շուրջ համառոտ կարծիքի շարադրանք՝ արտահայտելով սեփական տեսակետը:
- *Տեղեկանքի* կազմում - տեղեկանքը ինչ-որ բանի մասին հաղորդվող տեղեկությունն է, որը ստացվել է որոշակի որոնողական աշխատանքից հետո: Տեղեկանքները լինում են կենսագրական, փաստագրական, աշխարհագրական, տերմինագիտական (մեկնաբանվում և բացատրվում են որոշակի տերմիններ, եզրեր):
- *Ձևատրամաբանական* մոդելի ստեղծում - կարդացածի բառային-գծապատկերային մոդելի կազմում:
- *Թեմատիկ թեզիսների* կազմում - տվյալ գիտական բաժնի, թեմայի շուրջ հիմնական հասկացությունների համակարգի ստեղծում:
- *Գաղափարների սկզբաղբյուրների հավաքագրում* (մատրիցայի կազմում) - ասում են նաև գաղափարների աղյուսակ կամ ծրագրային աղյուսակ. նույն խնդրի շուրջ տարբեր հեղինակների արծարծած գաղափարների համեմատական բնութագրում աղյուսակի միջոցով:
- *Պատկերագրական գրառում* - տեքստի բովանդակությունը հաղորդվում է առանց բառերի, որոշակի պատկերների կամ նշանային համակարգի օգնությամբ:

Վերևում նշվեցին տպագրական սկզբնաղբյուրով կատարվող ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները: Հայտնի է, որ տեքստային աշխատանքի գործընթացում բազմաբնույթ ձևեր կիրառելու կարողություն ունեցող անձը նյութի յուրացման համար ավելի քիչ ժամանակ է տրամադրում, ինչպես նաև բարձրանում է նրա ճանաչողական գործունեության արդյունավետությունը: Տեքստային աշխատանքի մի ձևից մյուսին անցում կատարելիս փոփոխվում է մարդու ուղեղի աշխատանքի ռեժիմը, որն էլ կանխում է հոգնությունը և ձանձրույթի զգացումը:

Ցուցադրումը՝ որպես ուսուցման մեթոդ, նախատեսում է փորձի, տեխնիկական միջոցների, հեռուստահաղորդումների, տեսաֆիլմերի, դիաֆիլմերի, համակարգչային ծրագրերի ցուցադրում: Ցուցադրման մեթոդը ծառայում է ուսուցանվող նյութի դինամիկ առանձնահատկությունների բացահայտմանը, ծանոթացնում է առարկայի արտաքին տեսքին, ինչպես նաև ներքին կազմությանը: Այս մեթոդը շատ արդյունավետ է, երբ սովորողներն իրենք են ուսումնասիրում տվյալ առարկաները, երևույթները, գործընթացները, կատարում են անհրաժեշտ չափումներ, վերականգնում են դրանց միջև գոյություն ունեցող փոխկապակցությունները և փոխազդեցությունները: Այսպիսի

ինքնուրույն աշխատանքի շնորհիվ իրականանում է ճանաչողական ակտիվ գործընթաց, ընդարձակվում է սովորողի աշխարհայացքը, ստեղծվում է իմացության համար անհրաժեշտ զգայական-փորձարարական (էմպիրիկ) հիմք:

Ցուցադրման դիդակտիկական արժանիքն այն է, որ սովորողը տվյալ երևույթին կամ առարկային ծանոթանում է բնական իրավիճակներում կամ իրական հարաբերությունների մեջ: Բայց միշտ չէ, որ այդպիսի ցուցադրումը հնարավոր է: Այդպիսի դեպքերում կիրառում են բնական երևույթները արհեստական միջավայրում (օրինակ՝ կենդանիներին՝ գազանանոցում), կամ էլ արհեստական, փոքրացրած ծավալներով առարկաները ցուցադրում են բնական պայմաններում (օրինակ՝ փոքրացրած չափերով մեխանիզմներ): Ծավալուն մոդելները բոլոր առարկաների ուսումնասիրության համար կարևոր դեր ունեն, քանի որ հնարավորություն են ընձեռում ծանոթանալու կոնստրուկցիաներին, մեքենաների գործողությունների սկզբունքներին: Ժամանակակից մի քանի մոդելներ անհրաժեշտ չափումներ կատարելու, տեխնիկական բնութագրումներ տալու հնարավորություն են ստեղծում: Այս դեպքում շատ կարևոր է ցուցադրվելիք առարկաների ճիշտ ընտրությունը, բացի դրանից՝ պիտի կարողանալ սովորողների ուշադրությունը հմտորեն ուղղել ցուցադրվող երևույթի էական կողմերի բացահայտման վրա:

Ցուցադրական մեթոդի հետ սերտորեն կախված է պատկերազարդումը կամ նկարազարդումը (իլյուստրացիա): Հաճախ այս երկու մեթոդներն իրարից չեն տարանջատում:

Պատկերազարդ ցուցադրումը նախընտրում է առարկայի, երևույթի կամ գործընթացների ներկայացում խորհրդանշային արտահայտություններով՝ վահանակի, պլակատի, քարտերի, դիմանկարների, լուսանկարների, նկարների, գծապատկերների, կտավների վերատպությունների, հարթ մոդելների տեսքով և այլն: Վերջին շրջանում դիտողական պարագաների շարքում ավելացել են շատ հետաքրքիր նյութեր՝ գունեղ քարտեր՝ պլաստիկե ծածկույթով, ալբոմներ, ատլասներ և այլն:

Ցուցադրումը և իլյուստրացիան սերտ կապի մեջ են. ցուցադրությունը կիրառվում է այն դեպքում, երբ ուզում ենք, որ սովորողը տվյալ երևույթն ընկալի ամբողջության մեջ: Իսկ երբ հարկ է գիտակցել երևույթի էությունը, դրա մասերի փոխկապակցվածության սկզբունքները, ապա կիրառվում է պատկերավոր կամ խորհրդանշանային ցուցադրումը կամ իլյուստրացիան:

Այս մեթոդները կիրառելիս հարկ է ապահովել որոշակի պայմաններ՝

ա) չափավորություն. ցուցադրման ընթացքում դիտելու ժամանակահատվածը չափավորել,

բ)համապատասխանություն ուսուցանվող նյութին.. ցուցադրվող նյութը համապատասխանեցնել ուսուցանվող նյութի բովանդակությանը,

գ) տարիքային համապատասխանություն. ցուցադրվող նյութերը պիտի համապատասխանեն սովորողների տարիքային առանձնահատկություններին,

դ) տեսանելիության ապահովում. ցուցադրվող առարկան պիտի պարզ տեսանելի լինի բոլոր սովորողներին,

ե) հիմնական կամ էական կողմի ընդգծում. անհրաժեշտ է հստակորեն ընդգծել կամ առանձնացնել տվյալ առարկայի կամ երևույթի գլխավոր կամ էական կողմերը:

Առանձին և հատուկ խումբ են կազմում այնպիսի մեթոդները, որոնք զարգացնում են սովորողների գործնական կարողությունները և հմտությունները: Այս խմբի մեջ մտնում են վարժությունները, պրակտիկ և լաբորատոր մեթոդները:

Վարժությունները ուսումնական գործողությունների (մտավոր կամ պրակտիկ) բազմակի կատարումներն են դրանք յուրացնելու կամ դրանց որակի բարելավման նպատակով:

Բանավոր վարժություններն օժանդակում են սովորողների խոսքի կուլտուրայի, տրամաբանական մտածողության, հիշողության, ուշադրության, ճանաչողական հնարավորությունների զարգացմանը:

Գրավոր վարժությունների հիմնական նշանակությունը գիտելիքների ամրապնդումը, և դրանց կիրառման համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների մշակումն է:

Գրավոր վարժություններին սերտորեն առնչվում են գծագրական կամ գրաֆիկական վարժությունները: Նրանց կիրառությունը հնարավորություն է տալիս ավելի լավ ընկալելու, յուրացնելու, գիտակցաբար մտապահելու ուսուցանվող նյութը, օժանդակում են տարածական երևակայության զարգացմանը: Գծագրական վարժությունների թվին են դասվում գծագրերի, գծանկարների տեխնոլոգիական քարտերի պատրաստումը:

Սովորողի ինքնուրույնության աստիճանով պայմանավորված՝ վարժությունները, լինում են **վերարտադրողական, մարզողական** կամ **ստեղծագործական** բնույթի:

Ուսումնական գործընթացի ակտիվացման, առաջադրանքների գիտակցված կատարման համար կիրառվում են մեկնաբանություններ կամ բացատրություններ պարունակող վարժություններ: Դրանց էությունն այն է, որ սովորողները, վարժությունները կատարելով հանդերձ, որոշակի բացատրություններ են տալիս կատարած քայլի կամ գործողության մասին, որի արդյունքում էլ գիտակցում են իրենց արածը և լավ յուրացնում են տվյալ նյութը:

Որպեսզի վարժություններն արդյունավետ լինեն, պիտի համապատասխանեն մի շարք պահանջների՝

- սովորողների գիտակցական մոտեցում վարժության կատարմանը,
- կատարելիք գործողությունների կանոնների իմացություն,
- վարժությունների կատարման ընթացքում դիդակտիկական հաջորդականության պահպանում,
- հաշվետվություն ձեռք բերած հաջողությունների մասին:

Լաբորատոր մեթոդը սկզբնավորվել է սովորողների ինքնուրույն փորձարկումների, փորձերի հիման վրա, երբ կիրառվել են համապատասխան սարքեր, գործիքներ: Աշխատանքը կարող է կազմակերպվել անհատական կամ խմբային սկզբունքով: Սովորողից պահանջվում է առավել ակտիվություն և ինքնուրույնություն, քան ցուցադրման մեթոդի ժամանակ, որտեղ նրանք պասսիվ դիտող են և չեն մասնակցում կամ իրենք չեն կատարում հետազոտությունը:

Լաբորատոր մեթոդը ոչ միայն սովորողին զինում է գիտելիքով, այլ նաև նրան տալիս է այդ գիտելիքը գործնականում կիրառելու որոշակի կարողություն և հմտություն, որն էլ այս մեթոդի առավելություններից է: Սակայն այս մեթոդը պահանջում է հատուկ, թանկարժեք և հազվագյուտ սարքերի կիրառություն, բացի դրանից՝ շատ ժամանակ և էներգիա է խլում:

Գործնական (պրակտիկ) մեթոդներ. սրանք ուսուցման մեթոդներ են, որոնք միտված են ստացած գիտելիքը գործնական խնդիրների լուծման համար կիրառելուն: Դրանք գիտելիքների, կարողությունների, հմտությունների, վերահսկման և շտկողական աշխատանքները խորացնելու դեր են կատարում, խթանում են ճանաչողական գործունեությունը, օժանդակում են այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսին են տնտեսվարությունը, տնտեսումը, կազմակերպչական ունակությունները և այլն:

Որոշ հեղինակներ առանձին խմբերով ներկայացնում են ուսուցման ակտիվ և ինտենսիվ մեթոդները: Այս մեթոդները գիտնականների և պրակտիկների ուշադրությանն արժանացան 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած. այս հետաքրքրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ուղիներ էին որոնում ուսուցման գործընթացում սովորողներին ակտիվ գործունեության մղելու համար: Ուսուցման ավանդական տեխնոլոգիան, որն ուղղված է այն բանին, որ սովորողը լսի, մտապահի, վերարտադրի ուսուցչի ասածը, գրեթե չի ապահովում աշակերտի ճանաչողական ակտիվությունը:

Ուսուցման ***ակտիվ մեթոդներ***. սրանք այն մեթոդներն են, որոնց կիրառման դեպքում սովորողի գործունեությունը ձեռք է բերում արդյունավետ, ստեղծագործական, որոնողական բնույթ: Ուսուցման ակտիվ մեթոդներից են դիդակտիկական խաղերը, որոշակի իրադրության վերլուծությունը, պրոբլեմային խնդիրների լուծումը, մտագրոհը, հասկացությունների ենթիմաստներով կատարվող գործառնությունները, ուսուցումն ըստ քայլաշարի (ալգորիթմ) և այլն:

Ուսուցման ***ինտենսիվ մեթոդները*** կիրառում են կարճ ժամանակահատվածում ինչ-որ բան սովորելու համար: Այս մեթոդները կիրառվում են բիզնեսի, մարկեթինգի, օտար

լեզուների, պրակտիկ հոգեբանաության և մանկավարժության ուսուցման գործընթացում:

Եզրակացություն

Ուսուցման պրոցես ասելով ամենից առաջ հասկանում ենք գիտելիքների հաղորդում, ձեռքբերում , մարդու համար կենսական նշանակություն ունեցող կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի դրսևորում:Գիտելիքը ձեռք է բերվում որպես շրջապատի ճանաչման միջոց, որպես գիտելիք կամ տեղեկություն մարդկության անցյալի, ներկայի, ապագայի , նշանավոր դեպքերի , դեմքերի , բնության , բուսական ու կենդանական աշխարհի, գիտության տարբեր բնագավառների ու տեխնիկայի մասին:
Կրթության հիմնական նպատակը աճող սերնդի նախապատրաստումն է ապագային: Ուսուցումը դառնում է դյուրին ,երբ ընթացքը աշակերտի համար գրավիչ է ու հաճելի: Իսկ դրա համար անհրաժեշտ է , որ մենք կարողանանք, ըստ նախասիրությունների և ընդունակությունների, ճիշտ ընտրել գործունեության ձևը:
Տարրական դասարաններում ուսուցման գործընթացում կիրառվում են արդյունավետ մեթոդներ և մոդելներ, որոնք ուսուցվող նյութը դարձնում են մատչելի և դյուրամարս :
Ուսումնասիրելով մեթոդները՝ կարելի է ասել , որ դրանց ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը , սովորողի մեջ ձևավորում է նոր գաղափարներ , հետաքրքրություններ:
Ուսուցման հիմնական նպատակը բազմապիսի ու բազմակողմանի գիտելիքների հաղորդումն է ու ձեռքբերումը, երեխաների մեջ բոլոր կարգի կարողությունների ձևավորումը: Ժամանակակից մարդուն անհրաժեշտ գիտելիքների ծավալը աճում է խիստ և արագ:Աշակերտների մեջ գործնական կարողությունների մշակման պրոցեսի կազմակերպումը հատուկ արժեք է ստացել: Այս ամենի հիմքում ընկած է ուսումնական գործունեության ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ուսումնական գործունեության մեջ կան բազմապիսի մեթոդներ և հնարներ: Այդ մեթոդներն ու հնարները խթանում են ուսուցման արդյունավետությունը: Ուսուցումը ընթանում է աշակերտի կատարած մտածված , հետևողական աշխատանքի շնորհիվ :
Անվանի հոգեբան Ի. Լինհարտը ասել է .<< Ճանաչողության բարձրագույն ձևերը ծագում են ոչ թե անմիջական զգայություններից ու ընկալումներից , այլ գործունեության ընթացքում(սովորելիս), զգայա-շարժողական կառուցվածքի հիման վրա, որով և ավարտվում է մտավոր գործողությունը>>: Ուսումնական գործընթացում առաջարկվող մեթոդները տարբեր են: Դասի յուրաքանչյուր փուլում հնարավոր է օգտագործել բազմապիսի մեթոդներ և հնարներ : Անհրաժեշտ է ճիշտ և տեղին կատարել մեթոդի ընտրությունը:Մեթոդի օգտագործումը պետք է չափավորված և կշռադատված լինի. դրանց անտեղի ու չափից ավելի օգտագործումը օգուտի փոխարեն , ընդհակառակն, մեծ վնաս կարող է հասցնել ուսումնական աշխատանքին:

Առաջարկում եմ՝

Մեթոդները պետք է լինեն ժամանակի պահանջով , արդիական և նպաստեն կրթության որակի բարելավմանը : Ճիշտ նպատակին օգտագործված մեթոդը բարձրացնում է սովորողների ուսուցման արդյունավետությունը: Անհրաժեշտ է ընդլայնել ուսումնական գործընթացում ակտիվ մեթոդների հնարների և խաղերի կիրառումը , ուսումնասիրել և կիրառել նորանոր մեթոդներ, աշխատել ձևավորող գնահատման շեշտադրմամբ , բացահայտել աշակերտի կարողություններն ու հմտությունները , որոնք հիմք կդառնան ուսումնական գործընթացում ,ստեղծել պայմաններ , որոնք կխթանեն ուսուցչի գործունեությունը:

Օգտագործված գրականություն

1. Արնաուդյան Ա. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004:.
2. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Ուսուցչի ձեռնարկ. Մայրենի 5-6, Եր., Էդիթ պրինտ, 2006 և 2011:
3. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման փաթեթներ:
4. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Համագործակցային ուսուցում, Երևան, ,Անտարեսե, 2006:
5. Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:
6. Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականության ուսուցումը 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարաններում, Երևան, ,Զանգակ-97ե, 2009, 2010, 2011: